

Բազմաբնակարան բնակելի շենքի կառուցում

*Շրագրի
նկարագիրը*



Շրագրի նպատակն է Երևանի Դավիթ Անհաղթ փողոցի 8/13 հասցեում կառուցել բազմաբնակարան բնակելի շենք: 14 հարկանի շենքի առաջին հարկում նախատեսված են առևտրային, սպասարկման և այլ ծառայությունների համար տարածքներ, իսկ երկրորդից տասնչորսերորդ հարկերը կլինեն բնակելի: Երկու նկուղային հարկերում նախատեսված են ավտոկայանատեղեր՝ ավելի քան 80 ավտոմեքենայի համար: Շենքն ունի մեկ շքամուտք, յուրաքանչյուր հարկում նախատեսված է ութ բնակարան: Բնակարանների ընդհանուր թիվը 104-ն է:






***Տեխնիկական
ցուցանիշներ***

Շենքը նախատեսվում է կառուցել մոնոլիտ եղանակով, կոնստրուկտիվ սխեման նախատեսված է սեյսմիկ 3-րդ գոտում կառուցման համար: Արտաքին պատերը պարագծով եռաշերտ են, ճակատային և ներքին շերտերը՝ թեթև բետոնե ամրանավորված լցվածքով:

Նկուղային հարկերի մակերեսներն են՝ 1150մ² և 1005մ², առաջին հարկի մակերեսը՝ 465.0մ², բնակարանների ընդհանուր մակերեսը տիպարային հարկում՝ 543մ², ընդհանուր բնակելի մակերեսը շենքում 7061.6մ² է, ընդհանուր մակերեսը՝ 10377.8մ²:





Ծրագրի ժամկետներ

Շուրջ 3 տարի:

Ծրագրի արժեքը

Ծրագրի ընդհանուր արժեքը կկազմի 5,5 մլն ԱՄՆ դոլար:

Ներդրումների ձևը և հիմնական պայմանները

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել մասնավոր ներդրումների ներգրավմամբ: Երևանի քաղաքապետարանը ներդրողին կաջակցի հողատարածքների իրավական կարգավիճակի մասին ներդրողին տեղեկատվության տրամադրման, ծրագրի իրականացման համար անհրաժեշտ փաստաթղթերի ձեռքբերման գործում:

Ներկա իրավիճակ

Առկա է էսքիզային նախագիծ:

